ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2012թվականի N 431-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0223-0064 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0223-0064 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ընդգրկված է Բնակավայրերի հողերի այլ հողերի կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, վերը նշված հողամասը ըստ գործառնական նշանակության փոխադրել բնակելի կառուցապատման հողերի կազմ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված Բնակավայրերի հողերի 11-003-0223-0064 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Շահումյան փողոց թիվ 11/3:
2. Շահումյան փողոց թիվ 11/3 հասցեի Բնակավայրերի հողերի 20.0քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել Բնակելի կառուցապատման հողերի կազմ և հաշվառել համայնքի հողերի ֆոնդի տարեկան հաշվեկշռում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 20
ք.Դիլիջան